

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 28/2

ք.Երևան

25 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ավելացված արժեքի հարկի գծով նախկինում հաշվարկված և վճարված գումարները հետ վերադարձնելու վերաբերյալ «ՈՍԿԵԿՈԹ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ՈՍԿԵԿՈԹ» ՍՊԸ կողմից կրկին անգամ բերվել է դիմում-բողոք ավելացված արժեքի հարկի գծով նախկինում հաշվարկված և վճարված գումարները հետ վերադարձնելու վերաբերյալ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոք բերած նույն անձի, բողոքարկման նույն առարկայի մասին, միևնույն հիմքերով բողոքի վերաբերյալ առկա է հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշում:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 20.03.2018թ. նիստում քննության է առնվել «ՈՍԿԵԿՈԹ» ՍՊԸ բողոքն ավելացված արժեքի հարկի գծով նախկինում հաշվարկված և վճարված գումարները հետ վերադարձնելու վերաբերյալ: Արդյունքում ընդունվել է թիվ 17/9 որոշումը, որի համաձայն՝ բողոքը մերժվել է: Այսինքն, դիմում-բողոք բերած նույն անձի, բողոքարկման նույն առարկայի մասին, միևնույն հիմքերով բողոքի վերաբերյալ առկա է հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի որոշում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ՈՍԿԵԿՈԹ» ՍՊԸ դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Գ. ԱՆԱՆՅԱՆ